ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ (1991-1996 ԹԹ.)

Հայկական պետությունների աշխարհաքաղաքականության ձեւավորման մեջ ականավոր դեր ունի դեռեւս ՀԽՍՀ ԳԽ-ի կողմից ընդունված Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, որի 12 հոդվածներում «ամփոփված» էր նոր ծնունդ առնող Հայաստանի (երրորդ) Հանրապետությունը: Այն հիմնականում պայմանավորեց նորանկախ երկրի քաղաքական եւ պատմական զարգացումները:

Այսպես, համաձայն այս հիմնարար փաստաթղթի հռչակած անկախ պետականության հաստատման գործընթացի նպատակների[1], 1991թ. սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով Հայաստանը հռչակվեց անկախ եւ ինքնիշխան հանրապետություն: Սա մեծ իրադարձություն էր, քանի որ սկսվեց մի նոր ժամանակաշրջան հայ ժողովրդի պատմության մեջ: Հայաստանը նորից դուրս եկավ քաղաքական ասպարեզ եւ շուտով դարձավ միջազգային հանրության լիիրավ անդամ: 70 տարի շարունակ, գտնվելով Խորհրդային Միության կազմում եւ հանդիսանալով նրա բաղկացուցիչ մասը, Հայաստանի Հանրապետությունը զուրկ էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից: Նա նույնիսկ հնարավորություն չուներ շփումներ հաստատելու իր անմիջական հարեւան պետությունների՝ Թուրքիայի եւ Իրանի հետ: Անկախության ձեռք բերումից հետո Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն ընձեռնվեց վարելու

[1] «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», տես ԻՐՏԵԿ (C) 1996, Երեւան, էջ 1:

ինքնուրույն, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան արտաքին քաղաքականություն:

Երիտասարդ հանրապետության առջեւ ծառացած հիմնախնդիրներից մեկն էր սահմանել արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները եւ սկզբունքները: Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը նորանկախ Հայաստանի Հանրապետությանը չէր կարող փոխանցել որեւէ արժեքավոր բան այս ասպարեզում, ավելին, նոր ղեկավարները չունեին որեւէ փորձ եւ չկային բավականաչափ արհեստավարժ դիվանագետներ Հայաստանում: Այս հանգամանքները ՀՀ իշխանություններին ստիպեցին սկսել ամեն ինչ փաստորեն զրոյից: Մյուս կողմից արտաքին քաղաքականության հիմնախնդիրները խիստ կապակցված էին ՀՀ ազգային անվտանգության հիմնախնդիրների հետ: Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթների կառուցման գործընթացը շատ դժվարին էր, եւ նորանկախ ՀՀ ղեկավարությունից պահանջվեց երկար ժամանակ այն հայտարարելու համար: 1992թ. սեպտեմբերի 23-ին Միացյալ Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 47-րդ նստաշրջանում արտասանած իր ելույթում՝ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը ձեւակերպեց Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնադրույթները: Դրանք երկուսն էին: Առաջին. «Առանց բացառելու այլ գործոններ, պետության եւ ժողովրդի անվտանգությունը կախված է մեր բոլոր հարեւանների հետ հարաբերությունների նորմալացումից, առկա հակամարտությունների խաղաղ բանակցությունների միջոցով լուծումից եւ տարածաշրջանային համագործակցության զարգացումից, որոնք մեզ պետք է առաջնորդեն տարածաշրջանում հավաքական անվտանգության համակարգի»:[2] Այս հիմնադրույթը շատ է կարեւորվում ՀՀ ղեկավարության կողմից: Ըստ ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի. «Հայաստանի անվտանգության ամենահուսալի երաշխիքը ոչ թե տնտեսական եւ ռազմական ուժն է, այլ հարեւանների հետ նորմալ հարաբերությունների հաստատումը»:[3] Այստեղ թերեւս թերագնահատվել է ուժի դերը:

---

[2] Դիվանագիտական բանբեր, Վենետիկ-Իտալիա, 1993թ. հուլիս, էջ 6:

[3] N. Hovhannisyan, The foreign policy of Armenia, Yerevan 1998, p.11.

Ինչ վերաբերվում է ՀՀ արտաքին քաղաքականության եռնոռոռ հիմնադրույթին, ապա նախկին նախագահն այն այսպես ձեւակերպեց. «Ճանաչելով հանդերձ հետզհետե փոքրացող աշխարհում միմյանցից կախված պետությունների իրական շահերը այս տարածաշրջանում՝ Հայաստանը համաշխարհային մրցակցության մեջ չի կարող մաս կազմել իրար հակամարտող բլոկներից որեւէ մեկին, որոնք, տեղական հակամարտություններին պարտադրելով միջազգային բնույթ, բարդացնում են արդեն բարդ վիճակը»:[4]

Սրանք էին այն երկու սկզբունքները, որոնք դարձան ՀՀ արտաքին քաղաքականության հիմնադրույթի հիմնաքարերը:

1991թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեից հետո 1991-92 թթ. ծավալվեց ՀՀ անկախության ճանաչման գործընթացը: ՀՀ անկախությունը ճանաչեցին Ռուսաստանը, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Չինաստանը, Հնդկաստանը, Կանադան, Ճապոնիան, Թուրքիան, Իրանը, Եգիպտոսը, Իսրայելը, Սիրիան, Լիբանանը, Վրաստանը, Հորդանանը եւ այլ երկրներ: Առաջինը Հայաստանի անկախությունը ճանաչեց Վրաստանը (1991թ. հուլիսի 27): Թուրքիան առաջինն էր մերձավորարեւելյան պետություններից, որը հայտարարեց ՀՀ անկախության ճանաչման մասին (1991թ. դեկտեմբերի 24): Առաջին պետությունը, որը հաստատեց դիվանագիտական հարաբերություններ ՀՀ հետ, Լիտվան էր (1991թ. նոյեմբերի 21), իսկ մերձավորարեւելյան առաջին պետությունը Իրանն էր (1992թ. փետրվարի 9):[5] Հայաստանի անկախության ճանաչումը եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ուժեղացրեց Հայաստանի միջազգային դիրքը եւ բացեց դռները նրա առջեւ՝ դառնալու միջազգային հանրության անդամ՝ օգտվելով բոլոր իրավունքներից: 1992թ. մարտի 2-ին ՀՀ դարձավ Միացյալ Ազգերի Կազմակերպության անդամ: Հայաստանը ներգրավվեց նաեւ մի շարք այլ կազմակերպությունների մեջ. դրանցից էին ԵԱՀԿ-ն, ԱՊՀ-ն, Սեւծովյան տնտեսական համագործակցությունը եւ այլն:

---

[4] Դիվանագիտական բանբեր, էջ 6:
[5] Դիվանագիտական բանբեր, էջ 4:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղեծրում առանցքային եւ ուրույն տեղ էին զբաղեցնում մեր հարեւանները՝ Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրները եւ ժողովուրդները, որոնց հետ բազմաբնույթ հարաբերությունների զարգացումը ոչ միայն կենսական անհրաժեշտություն է, բնական պահանջ, այլեւ՝ պատմա-աշխարհագրականորեն պարտադրված իրողություն: Դարերի ընթացքում տարածաշրջանի ժողովուրդների միջեւ ձեւավորված պատմամշակութային, առեւտրատնտեսական առնչությունները, որոնք որոշակի դեր էին խաղում միջպետական հարաբերությունների զարգացման եւ ամրապնդման գործում, ստացան նոր որակ:

Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների նկատմամբ ՀՀ կողմից վարվող ինքնուրույն քաղաքականության շնորհիվ ձեւավորվեց նոր հարաբերություններ: Մերձավոր եւ Միջին Արեւելքը հզոր տնտեսական ներուժ ունեցող, աշխարհաքաղաքական բարդ մի տարածաշրջան է, որը պահանջում էր ջանքերի գերլարում եւ դիվանագիտական նուրբ աշխատանք: Տարածաշրջանի հարեւանների հետ համագործակցության զարգացման խնդրում Հայաստանն առաջնորդվում է բարի դրացիության եւ փոխադարձ հարգանքի ու վստահության սկզբունքով:

Հայաստանի դիրքը քաղաքական առումով կարեւոր է ինչպես անմիջական հարեւանների, այնպես էլ շրջանում շահեր հետապնդող տերությունների համար: Հայաստանը հյուսիսը՝ հարավին, արեւելքը՝ արեւմուտքին կապող խաչմերուկներից է: Եվ թեպետ Հայաստանի մարտա-վարական, աշխարհաքաղաքական, տնտեսական քաղաքականությունը մշակելիս հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ Հայաստանը տարբեր տարածաշրջանային կազմակերպությունների լիիրավ անդամ է, բայց այնուամենայնիվ մեզ համարում ենք Մերձավոր Արեւելքի բաղկացուցիչ մասը: Հայաստանը մի կողմից թյուրքական աշխարհի ամբողջական պատկերը խախտող «օտարածին» սեպ է, մյուս կողմից գերակայող մահմեդական միջավայրի մեջ քրիստոնեության, դրանով իսկ, կամա թե ակամա, քրիստոնյա Արեւմուտքի եւ Ռուսաստանի շահերը պաշտպանելու կոչված

«ճակատագրական գիծ»՝ «մարտնչող ցիվիլիզացիաների» Հանթինգթոնյան տեսության համաձայն:[6]

Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների հետ հարաբերությունների ձեւավորման ասպարեզում, անշուշտ, ՀՀ դիվանագիտությունը ունեցել է ե՛ւ հաջողություններ, ե՛ւ որոշ բարդություններ՝ կապված այս կամ այն երկրի հետ: Օրինակ՝ Թուրքիայի պարագայում բանը կարող էր հասնել անգամ չքողարկված ուղղակի ագրեսիայի 1993թ-ին եւ միայն Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի անմիջական միջամտությամբ հաջողվեց կանխել այն: Ռուսաստանի ՀՈՒ գլխավոր հրամանատար մարշալ Շապոշնիկովը լրջորեն զգուշացրեց Թուրքիային, որ ՀՀի դեմ ուղղված որեւէ ռազմական ագրեսիա կնշանակեր III համաշխարհային պատերազմի սկիզբ:[7] Թուրքական կառավարությանն իր «որոշակի մտահոգությունն արտահայտեց ԱՄՆ-ն»:[8]

ՀՀ մեծապես կարեւորում էր կայուն եւ բարի դրացիական հարաբերությունների հաստատումն իր անմիջական բոլոր հարեւանների, այդ թվում նաեւ Թուրքիայի հետ՝ ոչ օրինաչափ համարելով դրացի երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների եւ համագործակցության բացակայությունը: 1991թ. ՀՀ անկախության հռչակումից եւ Թուրքիայի կողմից ՀՀ որպես անկախ պետություն ճանաչելուց հետո, երկու պետությունների համար հնարավորություն ստեղծվեց պետական մակարդակով հաստատել ուղիղ, չմիջնորդավորված հարաբերություններ, սակայն մինչ օրս երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ չեն հաստատվել: Դրա պատճառը Թուրքիայի կողմից առաջ քաշված նախապայմաններն էին, որոնցից էին նաեւ ԼՂ հիմնահարցի լուծումը եւ դրանով պայմանավորված հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը:

---

[6] Տես՝ O. Beylerian, Emerging Alliances and Alignments in the Middle East, Volume I, March-April 26, 1999, Erevan, American University of Armenia, p. 5, 6, 7,8.

[7] N. Hovhannisyan, The Foreign Policy of Armenia, p. 34.

[8] J. Nicol. Transcaucasus Newly Independent States: Political Developments and Implication for US Interest. Updated August 17, 1995. Foreign Affairs and National Defense Division. Congressional Research Service. The Library of Congress, Washington D. C., 1995, p. 5.

Ի տարբերություն Թուրքիայի նման դիրքորոշման, ՀՀ իշխանությունները գտնում էին, որ երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ պետք է հաստատվեն առանց նախապայմանների եւ չպետք է պայմանավորված լինեն այլ պետություններ հետ նրանց ունեցած հարաբերություններով: Տարածաշրջանում իրադարձությունների զարգացումը եւ աշխարհաքաղաքական մի շարք գործոնների ազդեցությունը Թուրքիային ստիպեցին որոշ չափով մեղմել իր դիրքորոշումը Հայաստանի հանդեպ եւ ակնարկել իր մոտեցման մեջ որոշ փոփոխություններ մտցնելու հնարավորությունների մասին: Հայասատանի եւ Թուրքիայի միջպետական հարաբերությունները կրում էին անուղղակի բնույթ եւ հիմնվում էին բացառապես ՀՀ անկախության ճանաչման մասին Թուրքիայի հայտարարության եւ ՄԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի իրավապայմանագրային համակարգի եւ մի շարք այլ կազմակերպությունների պայմանագրերի շրջանակներում ստանձնած փոխադարձ պարտավորությունների հիման վրա: Դիվանագիտական հարաբերության բացակայության պատճառով երկկողմ շփումներն իրականացվում էին հիմնականում միջազգային եւ տարածաշրջանային կառույցների շրջանակներում, ինչպես նաեւ հատուկ բանագնացների միջոցով:

Ի տարբերություն հայ-թուրքական հարաբերությունների, Հայաստանի հարաբերությունները իր մյուս անմիջական հարեւան խոշոր պետության՝ Իրանի հետ զարգացան դինամիկ: Նախ մեծ աշխատանք տարվեց երկու երկրների միջպետական հարաբերությունների իրավական դաշտ ստեղծելու ուղղությամբ, որին հետեւեց առեւտրատնտեսական եւ մշակութային կապերի հաստատումը, զարգացումը եւ ընդլայնումը: Հայաստանը հաստատեց եւ հետեւողականորեն զարգացրեց իր հարաբերությունները Իրանի հետ՝ ներգրավվելով համագործակցության նորանոր ոլորտների մեջ: Երկու երկրների հարաբերությունները հարաճուն զարգացան հատկապես էներգետիկայի, տրանսպորտի, առողջապահության, գյուղատնտեսության, միջպետական առեւտրի բնագավառներում: Իրանը դարձավ Հայաստանի խոշոր առեւտրական գործընկերներից մեկը՝ զիջելով միայն Ռուսաստանին:

Երկկողմ հարաբերություններին զուգահեռ ՀՀ ԱԳՆ մեծածավալ աշխատանք տարավ նաեւ ՀՀ եւ ԻԻՀ մասնակցությամբ տարածաշրջանային

շրջանակներում եռակողմ եւ բազմակողմ հարաբերություններ զարգացնելու ուղղությամբ: Զգալի նվաճումներ եղան Հայաստան-Իրան-Թուրքմենստան եռակողմ համագործակցության շրջանակներում: Կարեւոր էր նաեւ մշակութային համագործակցությունը: Այս ոլորտում պարբերաբար կազմակերպվում էին բազմաբնույթ միջոցառումներ, ցուցահանդեսներ եւ այլն:

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտում ուրույն տեղ զբաղեցրին արաբական երկները, որոնց հետ եւս տարվեց ակտիվ եւ հետեւողական աշխատանք: Նրանց հետ հարաբերությունների ձեւավորման եւ զարգացման գործում որոշակի դեր խաղացին այդ երկրներում ապրող հայկական համայնքները: Հայաստանի անկախության ձեռք բերումից հետո դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին մի շարք արաբական երկրների՝ Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի, Ալժիրի, Մարոկկոյի եւ Օմանի հետ: Հաշվի առնելով թե՛ տարածաշրջանում, թե՛ միջազգային ասպարեզում Սիրիայի եւ Եգիպտոսի ծանրակշիռ դերն ու վարած քաղաքականությունը առանձին ուշադրություն դարձվեց այդ երկրների նկատմամբ քաղաքականությունը: Նրանց հետ ամբողջական իրավական դաշտի ձեւավորումից հետո հաստատվեցին եւ զարգացվեցին հարաբերությունները առեւտրատնտեսական, գիտատեխնիկական, արդյունաբերական եւ այլ բնագավառներում: Սկզբնական շրջանում, ի տարբերություն արաբական մի շարք երկրների, մասնավորապես Սիրիայի, Լիբանանի եւ Եգիպտոսի, որոշ արաբական երկրներ Հայաստանի նկատմամբ ընդունեցին սպասողական կեցվածք, որը հիմնականում պայմանավորված էր ղարաբաղյան հակամարտության սուր ընթացքով եւ մի շարք միջազգային ատյաններում Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից վերոհիշյալ խնդրին կրոնական բնույթ հաղորդելու փորձերով: Սակայն իրավիճակը փոխվեց՝ ՀՀ վարած արտաքին քաղաքականության ու ներքին կայունության, ղարաբաղյան խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ ջանքերի, զինադադարի եւ հնարավոր կարգավորման հեռանկարի շնորհիվ: 1993թ. կեսից ՀՀ բոլոր մակարդակներով ուժեղացրեց արաբական երկրների հետ՝ հարաբերությունները զարգացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները: Դրա շնորհիվ դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին Քուվեյթի, Եմենի, Հորդանանի Հաշիմյան Թագավորության հետ: Որոշակիորեն աշխուժացան շփումները Բահրեյնի,

Կատարի եւ հյուսիսային Աֆրիկայի արաբական երկրների հետ: ՀՀ ԱԳՆ առանձնահատուկ ուշադրություն դարձրեց Ծոցի երկրների հետ հարաբերությունների զարգացմանը:

ՀՀ մերձավորարեւելյան քաղաքականության մեջ իր յուրահատուկ տեղն ուներ նաեւ Իսրայելի Պետությունը: Երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերություններ հաստատելուց հետո, բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելությունների ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց՝ համագործակցելու գյուղատնտեսության, առողջապահության եւ այլ բնագավառներում: Իսրայելում բացվեց ՀՀ պատվո հյուպատոսություն, որը իր աշխատանքով նպաստեց երկու երկրների միջեւ հարաբերությունների որոշ զարգացմանը:

Այսպիսով 1996թ-ի նախագահական ընտրությունների նախօրեին Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական եւ աշխարհաքաղաքական հիմնական ուղղությունները Մերձավոր եւ Միջին Արեւելքում արդեն (հիմնարար դրույթների եւ դրանք կազմավորող փաստաթղթերի առումով) ձեւավորվել էին: Դրանք սերտորեն կապված էին ՀՀ-ի ընդհանուր աշխարհաքաղաքական խնդիրների եւ աշխարհի հզոր տերությունների հետ փոխհարաբերությունների ընթացիկ-առկա գործընթացով եւ ՀՀ-ի ազգային անվտանգությունը ապահովելու նպատակով, քանի որ նորանկախ երկիրը հայտնվել էր մի նոր ավելի մեծ տարածաշրջանում՝ առավել մեծ մակրոաշխարհաքաղաքական Միջին Արեւելքում:[9]

Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքականության համար հիմնարար փաստաթղթեր հանդիսացան ՀՀ-ի անկախության մասին հռչակագիրը[10] եւ սահմանադրությունը, որոնք նաեւ հետագայում ազդեցին աշխարհաքաղաքական նոր դրույթների առաջացման վրա. օրինակ՝ «Ցեղասպանության ճանաչման եւ վնասների փոխհատուցման

---

[9] Ավելի մանրամասն այս գործընթացի մասին տես՝ O. Beylerian,"Emerging Alliances and Alignments in the Middle East Volume I-5, March 22-April 26, 1999, Am. Un of Arm., կամ նաեւ Nikolay Hovhannisyan, "Formation of the Transcaucasian-Middle Eastern geopolitical region".

[10] Տես՝ Հռչակագիր Հայաստանի Անկախության Մասին:

անհրաժեշտության» դրույթի պարագայում: Սույն դրույթը հետագայում առաջ քաշվեց որպես ազդելու միջոց՝ Թուրքիայի կարծր դիրքորոշումը մեղմելու նպատակով: ՀՀ առաջին արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը հանդիսացավ այս ուղղության հիմնադիրը, թեեւ վերոհիշյալ շրջանում այս դրույթը չհաստատվեց իբրեւ հիմնական աշխարհաքաղաքական գերակայություն ՀՀ-ի արտաքին քաղաքականությունում: Տվյալ ժամանակաշրջանում նորանկախ հանրապետությունը վարեց բավականին զգույշ արտաքին քաղաքականություն՝ խուսափելով անցյալ դարի սկզբի ճակատագրական սխալներից:[11] Այս շրջանը հանդիսանում է Մերձավոր եւ Միջին Արեւելքում ՀՀ-ի աշխարհաքաղաքական գերակայությունների ձեւավորման առաջին փուլը եւ մեծապես պայմանավորեց երկրորդ փուլի սկիզբը՝ ձեւավորումը, եւ հետագա զարգացումները:

Տարածաշրջանում Թուրքիա-Իրան[12] եւ Ռուսաստան-ԱՄՆ-Եվրոպական Միություն մրցակցությունը Հայաստանին ստիպեց կանգնել տարածաշրջանում արտաքին քաղաքական գերակայությունների ընտրության առջեւ՝ հատկապես դաշնակիցների նախընտրության պարագայում: «... սկզբնական շրջանում (Հայաստանի) կառավարող շրջաններում կային գործիչներ, որոնք հանդես էին գալիս Հայաստանի (ՀՀ-ի) հարաբերությունները Ռուսաստանի հետ վերանայելու եւ գլխավորապես դեպի Թուրքիա կողմնորոշելու պահանջով:[13] ... Բարեբախտաբար այդ միտումը զարգացում չստացավ: Դա արդյունք էր մի կողմից ՀՀ-ի բարձրագույն ղեկավարության սթափ մոտեցման, իսկ մյուս կողմից՝ Հայաստանի (իմա՝ ՀՀ-ի) նկատմամբ

---

[11] Այս հարցերի շուրջ տես՝ Կ. Սարդարյան, «Պատմություն եւ իրականություն», Երեւան, 1991թ.:

[12] Ավելի մանրամասն տես՝ Գագիկ Շալջյան, «Մերձավոր եւ Միջին Արեւելքի տարածաշրջանային քաղաքականության համակարգում իրանա-թուրքական հարաբերությունների եւ դրանք ձեւավորող հիմնական քաղաքական գործոնների հարցի շուրջ (1990-1993թթ.)», տես՝ «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Պր XVI, Երեւան, 1996թ.:

[13] Առավել մանրամասն այս տեսության շուրջ տես՝ Ժ. Լիպարիտյան, Պետականության մարտահրավերը, Երեւան, 1999:

Թուրքիայի ղեկավարության ոչ բարյացկամ քաղաքականության»:[14]

Հայաստանի (ՀՀ-ի) հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու եւ դիվանագիտական ներկայացուցչություններ փոխանակելու ճանապարհին խոչընդոտ հանդիսացավ Թուրքիայի կողմից առաջադրված երեք նախապայման-պահանջները. ա) չհիշատակել 1915թ. հայոց ցեղասպանությունը, բ) պաշտոնապես հրաժարվել հողային պահանջատիրությունից եւ գ) չաջակցել Լեռնային Ղարաբաղին, ճնշում գործադրել նրա վրա դադարեցնելու պայքարը եւ ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տերիտորիալ ամբողջականությունը:[15] Թուրքիան ինքը նորանկախ Հայաստանի Հանրապետությանը մատնացույց արեց իր աշխարհաքաղաքական խնդիրներից մի քանիսը, ընդ որում կարեւորագույնները: Երբ Ադրբեջանը պարտություն պարտության հետեւից կրեց ռազմի դաշտում Թուրքիան մի կողմից, ի համերաշխություն Ադրբեջանի, Հայաստանը ենթարկեց ցամաքային, ծովային եւ օդային շրջափակման, իսկ մյուս կողմից դիմեց բացահայտ ռազմական սպառնալիքների Հայաստանի նկատմամբ:

Քելբաջարի անկումից հետո թուրքական կառավարությունը 1993թ. դեկտեմբերի 3-ին ահազանգեց Հայաստանին՝ «դադարեցնել ագրեսիան եւ արագորեն ետ քաշվել Ադրբեջանի տարածքից»:[16] Թուրքիայի նախագահ Թուրգուտ Օզալը սպառնում էր «օգտագործել թուրքական ռազմական ուժերը՝ կանգնեցնելու հայերին»:[17] Ակնարկելով 1915թ. ցեղասպանությունը, նա հայտարարեց, թե «հայերը դաս չեն քաղել Անատոլիայի փորձից եւ կրած պատժից»:[18]

---

[14] Նիկոլայ Հովհաննիսյան, «Մերձավորարևելյան տարածաշրջանը և Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», տես՝ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Պր XVI, Երևան, 1996թ., էջ 15:

[15] Congressional Research Servise Issue Brief. Armenia-Azerbaijan Conflict Updated August 17, 1995 by Carol Migdalovitz. Foreign Affairs and National Defense Division. CRS. The Library of Congress", p. 11.

[16] "Nagorno-Karabakh". Working Paper Submitted to the United Nations Economic and Social Council. Comission on Human Rights. Fiftieth Session. 31 January to 11 March 1994 Agenda Item 12. Question of the Violation of Human Rights and Fundamental Freedoms in any Part of the World. 10 January 1994" by Hrair Balian. HRA 1994, p. 6.

[17] Նույն տեղում:

[18] Նույն տեղում:

Ոգեշնչված պրեզիդենտի ռազմաշունչ հայտարարություններից, թուրքական պաշտոնական շրջանակներում քննարկվում էր Հայաստանի նկատմամբ «Կիպրոսյան մոդելը» կիրառելու տարբերակը՝ այսինքն հանկարծակի հարձակումը եւ Հայաստանի արագ գրավումը:[19] Անկարայի այս քայլերը վանեցին Հայաստանի Հանրապետության սին հույսերը կապված թուրքական կողմնորոշման հետ: «Ստեղծված պայմաններում ակնհայտ դարձավ, որ մերձավորարեւելյան համակարգը, քաղաքական նորմալ հարաբերությունների հաստատումը մի կողմից Հայաստանի, իսկ մյուս կողմից Իրանի, արաբական երկրների եւ Վրաստանի հետ, բավարար չեն ապահովելու Հայաստանի ազգային անվտանգությունը, պետական անկախ գոյությունը՝ ի տես թուրքական սպառնալիքի արեւմուտքից, եւ Ադրբեջանի կողմից պատերազմական գործողությունները ԼՂ-ի դեմ վերսկսելու մտադրության՝ արեւելքից, որն անխուսափելիորեն Հայաստանը (եւ ՀՀ-ն, եւ ԼՂ-ն) կներգրավեր պատերազմական գործողությունների մեջ:[20]

ՀՀ-ի ղեկավարությունը գտավ մի քանի լուծումներ ա) ամրապնդելով եւ հաստատելով հայ-հունական զինակցություն, բ) կապող օղակի դեր ստանձնելով Մերձավոր եւ Միջին Արեւելքի այն երկրների հետ, որոնց եւս սպառնում է Թուրքական ագրեսիան կամ շահերը հակասում են Թուրքական պետությունների ծավալապաշտական քաղաքականությանն եւ նկրտումներին՝ հայ-սիրիական, հայ-հունական, հայ-իրանական քաղաքական կապերը զարգացնելով եւ խորացնելով, եւ ամենակարեւորը՝ գ) Ռուսաստանի հետ ռազմական համագործակցություն հաստատելով եւ դ) Իրան-Հայաստան-Ռուսաստան, ինչպես նաեւ Հունաստան-Հայաստան-Իրան առանցքների ստեղծումով:

Այս քայլերով լուծելով այդ ժամանակաշրջանին բնորոշ երկու անհապաղ աշխարհաքաղաքական ռազմավարական խնդիրներից (ԼՂ-ի հարցը եւ ՀՀ-ի ու ԼՂ-ի ազգային անվտանգության խնդիրը) երկրորդը, ՀՀ-ն հնարավորություն ստացավ առաջ քաշել տվյալ ժամանակաշրջանի համար տակտիկական մի քանի աշխարհաքաղաքական խնդիրներ, ինչպիսիք են՝ «հայ

---

[19] Նույն տեղում:

[20] Ն. Հովհաննիսյան, «Մերձավորարեւելյան տարածաշրջանը եւ Հայաստանի ազգային անվտանգության խնդիրը», տես՝ «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», պրակ XVI, Երեւան,1996, էջ 17:

դատը», «կոմպլեմենտարությունը», «սփյուռքի ե համահայկական քաղաքական կառույցների ձեւավորման» խնդիրը: Թեեւ այս խնդիրները այժմ կրում են տակտիկական բնույթ, սակայն նրանք միտում ունեն վերածվելու ստրատեգիական աշխարհաքաղաքական խնդիրների, ինչը գլխավորապես պայմանավորված կլինի ՀՀ-ի հզորացմամբ եւ առաջին երկու կարեւորագույն գերխնդիրների ապահովմանը. երկու հայկական պետությունների ազգային անվտանգության ապահովմամբ:

Այսպիսով ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի անկախությունից ի վեր առաջ եկավ աշխարհաքաղաքական գերխնդիր ապահովել ՀՀ եւ ԼՂՀ ազգային անվտանգությունը, ինչին էլ ուղղված էր ՀՀ-ի ղեկավարության արտաքին քաղաքականությունը: Այս խնդրի լուծմանն էր ուղղված այն աշխարհաքաղաքական դրույթը, որ պետք է բարիդրացիական հարաբերություններ հաստատել Հայաստանի (ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի) անխտիր բոլոր հարեւան պետությունների հետ: Սակայն թուրքական պետությունների (հատկապես Թուրքիայի) ոչ ճկուն գործելակերպը հանգեցրեց ՀՀ-ի աշխարհաքաղաքական կողմնորոշումների վերջնական ճշտմանը:

Հայաստանի Հանրապետությունը, շնորհիվ իր հավասարակշռված արտաքին քաղաքականության եւ լուծելով իր համար կարեւորագույն աշխարհաքաղաքական խնդիրը՝ ազգային անվտանգության հարցը, դարձավ է Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն:[21]

Երբ խոսք է գնում գործոնի մասին, ապա, ի տարբերություն Ադրբեջանի եւ Վրաստանի, Հայաստանի (ՀՀ-ի) հարցում որոշակի թերահավատության, անգամ նիհիլիստական մոտեցում է դրսեւորվում: Կապված նրա հետ, որ Հայաստանի Հանրապետությունը ելք չունի դեպի ծով, ինչպես՝ Վրաստանը, կամ էլ՝ կարեւոր ռեսուրսային պաշարներ, ինչպես՝ օրինակ՝ Ադրբեջանը: Սակայն դա մոլորություն է, որովհետեւ Հայկական գործոնի առկայության հանգամանքը պայմանավորված է եւ դրսեւորվում է աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական եւ կոմունիկացիոն-հաղորդակցման մակարդակներով:[22]

---

[21] Ավելի մանրամասն տես՝ Ն. Հովհաննիսյան, «Հայաստանը Անդրկովկասյան-Մերձավորարեւելյան աշխարհաքաղաքական գործոն», տես՝ «Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ», Պրակ XVIII, էջ 16-39.
[22] Նույն տեղում, էջ 18:

Խորհրդային Միության փլուզումից հետո Անդրկովկասում ստեղծվեց «քաղաքական վակուումի» իրավիճակ: Այդ «բացը» լրացնելու համար բացահայտ պայքար սկսվեց առաջին հերթին Ռուսաստանի, Թուրքիայի եւ Իրանի միջեւ Անդրկովկասում տիրապետող դիրքեր գրավելու, իր ազդեցությունն այդ տարածաշրջանի վրա տարածելու եւ կամ այն իրենց ազդեցության ոլորտի մեջ ներառնելու համար: Այդ խաղի մեջ մտան նաեւ ԱՄՆ-ը, որը սկզբնական շրջանում գործում էր Թուրքիայի միջոցով, իսկ հետագայում անմիջականորեն՝ Անդրկովկասը հռչակելով ԱՄՆ-ի համար կարեւոր կենսատարածք. Արեւմտյան Եվրոպայի երկրները, գլխավորապես Ֆրանսիան, Իտալիան, Անգլիան, Գերմանիան, ապա նաեւ այլ երկրներ, ի մասնավորին Չինաստանը, թեեւ նրա գործունեության ծավալները դեռեւս անհամեմատելի են մյուս գործող երկրների հետ: Սակայն առավել բախտորոշ դերակատարներն են հանդիսանում Ռուսաստանը, Թուրքիան եւ Իրանը, քանզի սրանք սահմանակից են Կովկասյան երկրներին եւ առավել շահագրգռված են տիրապետող դիրքեր գրավելու հարցում: Ածանցյալ է, որ վերոհիշյալ պետություններից յուրաքանչյուրը կարիք ուներ հաստատելու եթե ոչ դաշնակցային, ապա գոնե սերտ հարաբերություններ անդրկովկասյան որեւէ հանրապետության, իսկ գերադասելի էր, եթե՝ բոլորի հետ՝ ապահովելու յուր ներկայությունը, հաստատելու իր եւ չեզոքացնելու այլ պետության կամ պետությունների ազդեցությունը Այսկովկասում: Սակայն ոչ Ռուսաստանին, ոչ Թուրքիային եւ ոչ էլ Իրանին չհաջողվեց միաժամանակ հավասարապես լավ հարաբերություններ հաստատել Հայաստանի Հանրապետության, Վրաստանի եւ Ադրբեջանի հետ եւ նրանց օգտագործել որպես գործոն Անդրկովկասում իրենց ազդեցությունը հաստատելու եւ ուժեղացնելու համար: Իսկ դա նշանակում էր, որ նրանց ստրատեգիական շահերը ոչ միայն չեն համընկնում, այլեւ ուղղակի հակասության մեջ են գտնվում: Եվ ահա այսպիսի պայմաններում առաջին պլան է գալիս, կոնկրետ անդրկովկասյան այս կամ այն հանրապետության գործոնի եւ այդ գործոնն օգտագործելու խնդիրը: «Ռուսաստանի համար, քաղաքական որոշակի իրադրության ու ուժերի ստեղծված հաշվեկշռի հետեւանքով, ստրատեգիական գործոն դարձավ Հայաստանը: Սա չի նշանակում, թե Ռուսաստանը կամավոր ընտրություն կատարեց հօգուտ Հայաստանի (ՀՀ-ի)՝ հրաժարվելով ադրբեջանական եւ վրացական գործոններից: Ռուսաստանը, անշուշտ, կցանկանար օգտագործել այդ երկու

գործոնները նույնպես»:[23] Սակայն թե Վրաստանը, թե Ադրբեջանը անթաքույց հակառուսական քաղաքականություն որդեգրեցին: Տվյալ պայմաններում առկա էր Անդրկովկասում Ռուսաստանի մնալ-չմնալու, տարածաշրջանում ազդեցություն եւ կշիռ ունենալու հարցը:

Ռազմավարական այդ խնդիրը Ռուսաստանին հաջողվեց դրականորեն լուծել շնորհիվ հայկական գործոնի ու հայոց երկու պետությունների միասնական աշխարհաքաղաքական գծի, որ վարվում էր «Թուրքական շանտաժից» ի վեր, երբ Քելբաջարի դեպքերից հետո Թուրքական զորքերը 1993թ-ի ապրիլին ՀՀ-ին սահմանամերձ շրջանում համալրվեցին եւ «զգոնության վիճակի մեջ» բերվեցին:[24] Հայ-ռուսական դաշինքը կանխորոշեց հետագա զարգացումները:

Անդրկովկասում ստեղծված քաղաքական նոր իրադրությունը եւ ուժերի փոխհարաբերությունը բարձրացրեց ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի կշիռը, վարկը, դերն ու նշանակությունը Մերձավոր եւ Միջին Արեւելքում գործող քաղաքական ուժերի աչքում, առավել կարեւորեց հայկական գործոնը: Այսուհետ այն ուժերը, որոնք «շահագրգռված չէին» Այսկովկասում ռուսական ներկայությամբ ստիպված էին սիրաշահել ՀՀ-ին, փորձելով նրան պոկել Ռուսաստանի ազդեցության գոտուց: Հայաստանն էլ, իր հերթին, առաջ քաշելով «կոմպլեմենտության» քաղաքականությունը, սկսեց օգտագործել այս աշխարհաքաղաքական միտումները: Ինչը վերաճեցրեց մի նոր որակի «հայկական գործոնը». այսուհետ ոչ թե Ռուսաստանն էր օգտագործում հայկական գործոնը Միջին Արեւելքում, այլ, ընդհակառակը, Հայաստանի Հանրապետությունը ռուսական գործոնը իր շահերին հասնելու համար: Վկա հետագա իրադարձությունները «Փարիզյան եւ Քիվեստյան բանակցային գործընթացներում»:

ՀՀ-ի աշխարհաքաղաքականության համար անկյունաքարային հանդիսացավ 1995թ-ի մարտի 16-ի պայմանագրով Ռուսաստանին տրամա-

---

[23] Նույն տեղում, էջ 19:

[24] Congressional Research Servise Issue Brief. Armenia-Azerbaijan Conflict Updated August 17, 1995 by Carol Migdalovitz. Foreign Affairs and National Defense Division. CRS. The Library of Congress", p. 11.

դրված ռազմական բազան:[25] Ինչն էլ պայմանավորվեց ՀՀ-ի աշխարհաքաղաքականության որակապես նոր ու ավելի բարձր աստիճանի բարձրացմանը Միջին Արեւելյան տարածաշրջանում:

Ամփոփելով ասեմ, որ աշխարհաքաղաքականության հիմնադրույթների վերջնական ձեւավորման մեջ մեծ դեր ուներ 1995թ-ին սահմանադրության ընդունումը:

«1995թ. ՀՀ Սահմանադրության ներածությունը, վկայակոչելով Հայաստանի անկախության մասին հռչակագիրը, դրանով իսկ Հանրապետության հիմնական օրենքի մակարդակի է բարձրացնում այդ հռչակագրում ամրագրված դրույթները, այդ թվում հայերի ցեղասպանության պաշտոնական (միջազգային) ճանաչման, դատապարտման եւ դրա հետեւանքների վերացման պահանջը»:[26] Այսպիսով սահմանադրությամբ ամրապնդվեց անկախության հռչակագրում ընդունված հայ պետականության աշխարհաքաղաքականության ռազմավարական խնդիրները եւ նպատակները: Ավելին, սահմանադրությունը սկսում է «Հայ ժողովուրդը» արտահայտությամբ, որով ժողովուրդը ճանաչվում է որպես Սահմանադրության արարիչ: «Նման մոտեցումը առանձնահատուկ նշանակություն ունի մեր աշխարհասփյուռ ժողովրդի համար, քանի որ դրանով ընդգծվում է Հայաստանի Հանրապետության՝ աշխարհի բոլոր հայերի պետական տան, նրանց նյութական եւ հոգեւոր հարստություն լինելու պարագան»:[27] Այսինքն սրանով հիմք էր դրվում «համաշխարհային պետության» հայեցակարգին (որը կիրառում է Իսրայելը եւ հրեա ժողովուրդը): Թեեւ Լեւոն տեր-Պետրոսյանի կառավարման շրջանում դրա արդյունքները այդքան էլ ակնառու չէին՝ վերջինիս անհեռատես «թալանչիական» քաղաքականության պատճառով, Ռ. Քոչարյանի կառավարման տարիներին այս դոկտրինը արդեն իսկ գործի դրվեց՝ հատկապես ցեղասպանության ճանաչման հարցում:

---

[25] "The Diplomatic Bulletin of the Foreign Ministry of the Republic of Armenia", July-September, 1997, p. 20.

[26] Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը իրավագիտության դոկտոր Վլադիմիր Նազարյանի ծանոթագրություններով եւ մեկնաբանություններով, Երեւան,1995թ., էջ 6:

[27] Նույն տեղում: